նեալ սուրբ շապիկն է ի ներս. և կեցաք անդ ԺԸ յօր, մինչ բացին որ արժանի եղաք մեզ և մեր ծնողացն և երախտաւորացն. եւ դասասաց վարդապետ կային խիստ մեծ հարկօք պատուեցին զմեզ և մեծարեցին։ Եւ անտի ելեալ գնացաք բազում աւուրք բազում քաղաքաւ հասաք ի մեծն Ցունվէս[15] ուր թագաւորանիստ է յԱլամանաց և կեցաք անդ մետասան յօր. և անդ է Քրիստոսի ուր ամենազօր սուրբ թագաւորին տեառն մեր Յիսուսի Քրիստոսի սուրբ ֆութան որ ի ժամ խաչելութեանն կապեցին Քրիստոսի ասուածընկալ ա-րեամբն ներկեալ էր և արժանացաք սուրբ տեսոյ նորա և մեզաց թողութիւն խնդրե-ցաք մեզ և մեր ծնողացն և երախտաւո-րացն։ Եւ անտի ելաք բազում յաւուրք յաշխատութեամբ բազում քաղաքաւ հա-սաք յաշխարհն Ֆլանտիու[16] և լեզու չգի-տէաք զրուցելու, խիստ դժարութեամբ յե-լաք անտից։ Եւ բազում աւուրք հասաք յաշխարհն Ընկլզաց[17] և զնոցա լեզուն այլ չիգիտէաք, նոքա այլ ձկնակերք էին զինչ մեծ և ահեղ ձուկն կայ յայն ծովէ որ է համատարած ծովուն յեզրն յարեւ-մուտս կոյս. և եկեալ հասաք բազում յա-ւուրք յաշխարհն Ֆրանցաւ[18] զայն ի քա-ղաքն սան Ֆոնիժ[19]. և այն քաղաքն ե-պիսկոպոսաց և թագաւորաց և թագոհուց գերեզմանատուն է խիստ գեղեցիկ և փա-ռաւորեալ քաղաք է և շատ եկեղեցի կայ. և յաւագ եկեղեցին ուր թագաւորաց գե-րեզման է յեկեղեցուն ձախ թիհն չորս կող էր դրած ձկան, ամէն կող հինգ գիրկ և երեք թիզ չափեցին և ասացին թէ այս ծովս կայ ֆիթիխարի ձուկն, և կեցաք յօր մի։ Եւ ելեալ յանտի հասաք ի մե-ծահամբաւ քաղաքն ի Բարիզ դեկտեմբերի ԺԹ. և մտեալ ի քաղաքն կէսյաւուրն և իրիկուն գնացաք ի սպիտալ մի հանաք. և մէկայլ օրն յետի ժամուն հասաք յաւագ եկեղեցին մեծ և գեղեցիկ և զարմանալի որ մարդ լեզուով չի կարէ պատմել. և յաւագ եկեղեցին ունի երեք մեծ դուռն յարեւմտից դիհն և ի միջի դրանն երկու փեղկին մէջն Քրիստոս է կանգնել և ի վերեւ դրանն՝ Քրիստոսի դատաստանն է նստել յոսկի աթոռով և ամէն յոսկի վարագով զարդարած է. և երկու հրեշտակ յաջ և ի ձախ կանգնել են և յաջ դիհի հրեշտակ բռնել է զայն սիւնն որ Քրիս-տոս կապեցին և զգեղարդն որ զՔրիստոս ի կողն խոցեցին և ի ձախ դիհն հրեշտակ կանգնեալ է, և զսուրբ խաչն է բռնել և ի յաջ դիհն սուրբ Աստուածածին է չօ-քել ի վրայ ծնկացն և ի ձախն Ս. Յով-հաննէս և Ս. Ստեփանոս և յառջեւն հրէշտակ հրեշտակապետք և ամենայն սուրբք. և մէկ հրեշտակին ձեռքն կշիռք որ զմեղքն և զվարձքն կու կշռէին զմարդուն. և ի ձախ դիհն քիչ մի վայր սատանայ և դեւքն ամենայն հետ իւր և զմեղաւոր մարդիկն զընճիլէին. և ի դժոխք հանած է զարհուրե-լի դիմօք որ մարդ ի ահուն կը սասանի և կու սոսկայ. և դէմ Քրիստոսի սուրբ յառաքեալքն և մարգարէքն և սուրբ հայ-րապետք և զաենայն սուրբ ազգի յազգի գունով զարդարած և ոսկով շինած է զար-քայութիւն, որ մարդ ի տեսնուն կը փա-ռաւորի. և այլ ի վեր հանած է քսանեւութ թագաւորն թաճն ի գլուխներ և կանգնել են մարդու պէս ի բոլորին. և այլ ի վեր զՏիրամայր սուրբ Աստուածածինն ոսկով զարդարած գունս ի գունոց, որ կանգնել են յաջ և ի ձախ սուրբ հրեշտակապետք ի սպասաւորութիւն. և եկեղեցուն լու-սամտերն բոլոր ամէն մէկ քան ի կալ մի։ Եւ եկեղեցին որ կու մտեն ի ձախ դիհն հանած է անտաշ վէմ մի մեծ զսուրբ Քրիստայփորն և զՔրիստոս ի յուսն, և ի վայր զնահատակութիւն սուրբ Քրիս-տափորին և որ յաւագ խորանին փոլորն զբոլոր Քրիստոսի սուրբ տնօրինականքն. և բազում զարդարանք կայ որ մարդ ե՞րբ կարէ լեզուով պատմել քաղաքին աղէկու-թիւնն և քաղաքն խիստ մեծ և զարմա-նալի քաղաք է և երկու գետ կու մտանէ ի մէջն, և կէսն ի դուրս չէ ելնել. և զքա-ղաքին մեծութիւնն ով կարէ պատմել. և կեցայ ի Փարիզ երեքտասան յօր։ Եւ անտից մէկ ընկեր այլ մարդ եղաւ մինչեւ ի յՍտըմպոլ քաղաք. և ՄՆացի միայն զա-